ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ | № 8, 1953 | Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Վ. Հարությունյան

7-ՐԴ ԴԱՐԻ ԱՇԽԱՐՀԻԿ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՆՈՐ ՀՈՒՇԱՐՁԱՆ

Մինչև 19-րդ դարի վերջը Հայաստանի վաղ շրջանին պատկանող աշխարհիկ ճարտարապետության ոչ մի հուշարձան հայտնի չէր։ Այդ մասին մեր պատկերացումները սահմանափակվում էին պատմական աղբյուրներում պահպանված հակիրճ վկայություններով։ 20-րդ դարի առաջին կեսի ընթացքում հնագիտությունը հարստացավ նման երեք կարևոր հուշարձանների հայտնաբերմամբ։ Դրանցից առաջինը՝ Ներսես 3-րդ կաթողիկոսի (Տայեցու) պալատական կոմպլեքսն է, որը բացվել է Հայաստանում սովետական կարգերի հաստատումից առաջ, Զվարթնոցի պեղումների ժամանակ, իսկ մյուս երկու հուշարձանները՝ Դվինի կաթողիկոսարանը և Արուճի պալատը բացվել են Սովետական իշխանության տարիներին։ Դվինի կաթողիկոսարանը բացվել է 1937 թվականին և գիտական գրականության մեջ արդեն հանրահայտ է․ Նրա ուսումնասիրությամբ զբաղվել են մի շարք մասնագետներ[1]։

Արուճի պալատի ավերակները բացվել են միայն վերջերս։

Հոգևոր և աշխարհիկ ֆեոդալներին պատկանող այս շենքերի ավերակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե որքան իրավացի էր Թ. Թորամանյանը, երբ, հենվելով նրանց մասին եղած պատմական աղբյուրների վրա՝ գրում էր. «Այսպես պերճորեն պճնազարդվել և բնության առատ պարգևներեն օգտվելով կյանքը վայելել գիտցող իշխող դասն անպայման պետք էր որ ունենար թե ներքինով և թե արտաքինով շքեղաշուք ապարանքներ, համապատասխան իր տարազին և ապրելակերպին[2]․

Չնայած նույն ժամանակաշրջանին պատկանող ժողովրդական բնակարանների ավերակներ չեն պահպանվել և ուսումնասիրվել, բայց նկատի ունենալով Անիում, Դվինում և այլ բնակավայրերում հայտաբերված մի քանի հուշարձանների ճարտարապետական ձևերը, դժվար չէ տեսնել այն խոշոր տարբերությունը, խոր հակադրությունը, որ գոյություն ուներ մի կողմից ֆեոդալական վերնախավին և, մյուս կողմից, ժողովրդական լայն զանգվածներին պատկանող բնակարանների ճարտարապետության միջև։ Սոցիալական անհավասարության հիման վրա գոյություն ունեցող այդ հակասությունը, որն ընդհանրապես բնորոշ է անտագոնիստական հասարակության ճարտարապետության համար, իր

---

1) *Մինչև այժմ հրատարակված աշխատություններում Դվինի կաթողիկոսարանին անդրադարձել են ներքոհիշյալ հեղինակները.*

ա) Բ. Առաքելյան և Վ. Հարությունյան, *Նյութեր Դվին քաղաքի պեղումներից, «Սովետական արվեստ», № 4, 1940։*

բ) *Н. М. Токарский*, Архитектура древней Армении, *Երևան, 1946, էջ 43—47։*

գ) *В. М. Арутюнян*, Архитектурные памятники Двина, „Известия" АН Арм. ССР (серия общ. наук), № 8, 1947.

դ) *В. Арутюнян*, Архитектура патриаршего дворца в Двине, Труды Ерев. Политехн. ин-та им. К. Маркса, 1947.

ե) Վ. Հարությունյան, *Դվինի 5—7-րդ դարերի ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1950, էջ 56—80։*

զ) Կ. Ղաֆադարյան, *Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 111—112։*

[2] Թ. Թորամանյան, *Նյութեր հայ ճարտարապետության պատմության, հատ. 1-ին, Երևան, 1942, էջ 353։*

կնիքն է դրել նաև ֆեոդալական Հայաստանի բնակարանային ճարտարապետության վրա։ Մի կողմում մենք տեսնում ենք աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներին պատկանող շքեղ և մոնումենտալ պալատական կառուցվածքներ, մյուս կողմում՝ աշխատավորությանը պատկանող բնակարանների պարզ և անպաճույճ օրինակներ։

Անկախ այդ հանդամանքից, ինչպես ցույց են տալիս բացված հուշարձանների ուսումնասիրությունները, ժողովրդական բնակարանների ռացիոնալ և խորապես իմաստավորված ճարտարապետական-շինարարական որոշ տրադիցիաներ ոչ միայն սնել են կուլտային շենքերի ճարտարապետությունը, այլև աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալներին պատկանող բնակարանային շենքերի ճարտարապետությունը։

Ճիշտ է մինչև այժմ հայտաբերված աշխարհիկ ճարտարապետության հուշարձանների ոչ քանակը և ոչ նամանավանդ վիճակը հնարավորություն չեն տալիս դիտական լայն ընդհանրացումներ կատարել, բայց յուրաքանչյուր նոր հուշարձան ռեալ պայմաններ է ստեղծում, կոնկրետ նյութ մատակարարում այդպիսի ընդհանրացումների համար։

Արուճի պալատական կառուցվածքները, որոնց մնացորդները հայտաբերվել են վերջին տարիների ընթացքում, մեր կարծիքով, կարևոր նշանակություն ունեն հայ ճարտարապետության պատմության դեռևս անբավարար չափով ուսումնասիրված որոշ հարցերի լուսաբանման համար։

Դանի որ Արուճի պալատի պեղումները ավարտված չեն, ներկա հոդվածի մեջ հնարավոր է տալ միայն բացված հուշարձանների համառոտ ընութագիրը և անել մի քանի նախնական եզրակացություններ դրանց մասին։

Պատմական Արուճ գյուղում (ներկայումս Թալիշ, Աշտարակի շրջան) 7-րդ դարի երկրորդ կեսում իշխան Գրիգոր Մամիկոնյանի կողմից կառուցված եկեղեցու և պալատի մասին մենք ունենք մատենագրական ստույգ վկայություններ։

Ղևոնդ վարդապետը, որը պատմականորեն ավելի մոտ է եղել իշխան Գրիգոր Մամիկոնյանի ժամանակաշրջանին, առաջին պատմիչն է, որ խոսում է Արուճի տաճարի կառուցման մասին, սակայն, դժբախտաբար ոչինչ չի հայտնում պալատի կառուցման մասին։ «Իսկ Գրիգոր իշխանն հայոց,—պատմում է նա—յաւուրս իւրոյ իշխանութեանն խաղաղացոյց աշխարս։

Հայոց ամենայն հինից և հարձակմանց... «Եւ շինեաց նա տունն աղօթից գաւառն Արաղածոտին ի յաւանն Արուճ, տաճար փառաց անուան տեառն զեղեցիկ վայելչութեամբ, զարդարեալ ի յիշատակ անուան իւրոյ»[1]։

Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին խոսելով 7-րդ դարի 60-ական թվականների անցքերի մասին գրում է. «Զայսու ժամանակաւ բարեպաշտ իշխանն Գրիգոր Մամիկոնեան աստուածասիրն այցելութեամբ հիմնադրեալ զշքնաղագեղ եկեղեցին, որ ի դաստակերտին Արուճ՝ շինէ զնա ստիպով, երկնային իմն ճեմարան յարդարեալ ի վերայ երկրի։ Եւ ի հարաւոյ կողմանէ դնէ զարքունիս իւր յեղր քարաժայռ ծորակին, յորում բղխէ ականակիտ աղբիւր պղպջակեալ ընդ քարածերպս վիմարդ քարանցն, որ դեղերս ունի իրրև զպսակ պատուարի։ Եւ ապա հաստահեղոյս քարամբ և կրով պարսպեալ կարգէ տուն բնակութեան իւրոյ»[2]։

Ինչպես երևում է վերոհիշյալ մեջբերումից՝ պատմիչը վկայում է ոչ միայն իշխան Գրիգոր Մամիկոնյանի կողմից Արուճում պալատական շինություններ կառուցելու մասին, այլև հայտնում է, որ այն կառուցված է եղել «ի հարաւոյ կողմանէ» (տաճարի)։ «Յեղր քարաժայռ ծորակին, յորում բղխէ ականակիտ աղբիւր...»։

Դրասխանակերտցու այս վկայությունը Արուճի պալատի տեղադրության վերաբերյալ, ինչպես հետո կտեսնենք, միանդամայն ճշտվում է պեղումների հետևանքով բացված հուշարձանների շնորհիվ։

Ամենայն հավանականությամբ, Դրասխանակերտցին Արուճի տաճարի ու պալատի կառուցման մասին իր տեղեկությունները հաղորդում է ոչ միայն Ղևոնդ վարդապետի վկայության վրա հենվելով, այլ որպես ականատես։

Ուշագրավ է, որ Դրասխանակերտցին Արուճի պալատական կոմպլեքսը համարում է արքունիք («Եւ ի հարաւոյ կողմանէ դնէ զարքունիս իւր»)։ Արդյոք այս դեպքում նա նկատի ունի իշխան Գրիգոր Մամիկոնյանի Հայաստանի կառավարիչ լինելու հանդամանքը,

[1] «Պատմութիւն Ղևոնդայ մեծի վարդապետի Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 90—91։

[2] Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, «Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1912, էջ 90—91։

թե պալատական կառուցվածքների շքեղությունը։ Դատելով այդ կառուցվածքների վերջերս բացված մնացորդներից, պետք է ենթադրել, որ պատմիչը դժվար թե սխալված լիներ, եթե նույնիսկ նկատի ունենար վերջին հանգամանքը։ Թերևս դրանով պիտի բացատրել, որ իշխան Գրիգոր Մամիկոնյանը իր ապարանքում ընդունում էր պետական կարևոր հյուրերը։ Ինչպես վկայում է Սովսես Կաղանկատվեցին, Աղվանից աշխարհի թագավոր Ջիվանշիրը գալով Հայաստան՝ ընդունվում է Հայաստանի կառավարչի կողմից Արուճ գյուղաքաղաքում[1]։

* * *

Պատմիչների մոտ եղած այս ժլատ վկայությունները մի կողմից, և Արուճի պալատի նշմարվող ավերակները մյուս կողմից՝ վաղուց ի վեր գրավել էին հետազոտողների ուշադրությունը՝ նրանց մեջ առաջացնելով այդ վայրերը պեղելու բուռն ցանկություն։ «Որչափ հետաքրքրական կլիներ,—գրում է Թ. Թորամանյանը իր հոդվածներից մեկում,— Թալիշում Գրիգոր Մամիկոնյանի ապարանքը պեղել և տեսնել ներքին բաժանումները, որոնց մեջ կգտնվեր անպայման մի հյուրամեծարարության տաճար»։

Չարմանք են պատճառում հայ ճարտարապետության բաղմավաստակ հետազոտողի դիտական համարձակ կռահումները։

Թ. Թորամանյանը, անդրադառնալով այդ հուշարձանին, գրում է. «...Դեռ այսօր ականատեսին պատկառանք կազդեն Գրիգոր Մամիկոնյանի ապարանքի մնացորդներն իրենց հսկայական տարածությունով և մեծազանգված սրբատաշ քարերից շինված հաստահեղույս պատերով։ Արևելյան և հարավային պատերը կերևին դեռ մեկ և կեսեն երկու մետր բարձրությամբ, մեջտեղը փլատակներու բեկորներով բլուրացած է ով գիտե քանի դարերե ի վեր։ Անպայման այդ բլուրին տակ պահված կլինեն շատ լուսաբանություններ հօդուտ հայ պատմության և գեղարվեստի, սակայն դժբախտաբար, դուրկ է մնացած մինչև այսօր գիտնականի բահ ու բրիչի փրկարար ազդեցությունեն։ Պատերու շինության համար գործածված քարերու մեծությունը և որմնադրական արհեստի ծայրահեղորեն խնամոտ արտադրությունը դրավական է ինքնին շենքի ամբողջության, ճարտարապետական ու գեղարվեստական մի մեծ կոթող լինելուն 7-րդ դարուն մեջ»[3]։

Մի այլ առիթով Թ. Թորամանյանը գրում է.

«Այս ապարանքի մնացորդ պատերը, որը եկեղեցու նման սրբատաշ մեծ քարերով են շինված, ցույց կուտան թե որչափ շքեղ էր ամբողջ շենքը»։

Արուճի պալատի ավերակներին ուշադրություն են դարձրել նաև ուրիշ հետազոտողներ, որոնց վրա կանգ չենք առնում։

* * *

Դեռևս Հայրենական Մեծ պատերազմի տարիներին ձեռնարկելով Արուճի տաճարի ուսումնասիրությանը, 1946 թվականին առիթ ունեցանք հրատարակելու մի աշխատություն նրա թվագրման հարցի մասին[4]։

1947 թվականի հունիս ամսին, Պատմական հուշարձանների Պահպանության կոմիտեի և Հայաստանի Սովետական Ճարտարապետների Միության նախաձեռնությամբ Արուճում կազմակերպվեց միօրյա աշխատանք՝ տաճարից դեպի հարավ-արևելք, ձորակի եզրին գտնվող ավերակների շրջանում։ Սրանով հիմք գրվեց այս կարևոր հուշարձանի պեղումներին։

Նույն թվականից ձեռնարկվեց ավերակները շինարարական աղբից մաքրելու աշխատանքին[5]։ 1950 և 1951 թվականների ընթացքում ամբողջովին մաքրվեց այսպես կոչ-

---

[1] «Մովսեսի Կաղանկատուացւոյ պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1912, էջ 224։

[2] Թ. Թորամանյան, Նյութեր..., հատ. 1-ին, էջ 257։

[3] Նույն տեղում, էջ 121։

[4] *В. М. Арутюнян*, По поводу датировки храма в Аруч. Ереван, 1946.

[5] Մաքրման աշխատանքները կատարվել են Պատմական հուշարձանների Պահպանության կոմիտեի միջոցներով, կոմիտեի գիտական քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու Հ. Եղիազարյանի ղեկավարությամբ։ Մաքրման աշխատանքներին մասնակցել ենք նաև մենք, անմիջականորեն գրագվելով բացված հուշարձանների չափագիտությամբ, լուսանկարմամբ և ուսումնասիրմամբ։ Չափագրական աշխատանքների ընթացքում մեզ օգնել է տեխնիկ Հ. Գասպարյանը, իսկ լուսանկարչական աշխատանքներում՝ լուսանկարիչ Ա. Շահինյանը։


ԱՐՈՒՃ - ՊԵՂՈՒՄՆԵՐ
1951-52թ.
15.82

ված՝ առաջին դահլիճը (տես՝ գլխավոր հատակագիծը), իսկ 1952 թվականի աշնանը մաքրվեցին այդ դահլիճի արևելյան և հյուսիսային պատերի արտաքին կողմերը։

Առաջին դահլիճի մաքրմանը զուգընթաց, դեռևս 1951 թվականի աշնանը, նույնպիսի աշխատանքներ ձեռնարկվեցին տաճարից հարավ գտնվող տեղամասում։ Տաճարից ընդամենը 15 մետր հեռավորության վրա և նրան զուգահեռ, մոտ 25 մետր երկարությամբ բացվեց սալահատակի մի նեղ շերտ՝ վրան խարիսխների բեկորներ և ամբողջական խարիսխներ։ Նույն այս տեղամասում, 1951 թվականին դետնի երեսին գտնվող և Դվինի կաթողիկոսարանի խոյակի տիպին պատկանող խոյակից դեպի արևելք՝ 5—6 մետր հեռավորության վրա բացվեց նույն տիպի մի այլ, ավելի մեծ խոյակ։ Նախորդ խոյակի կողքին այս նոր խոյակի հայտարերումը, ինչպես և այն հանգամանքը, որ դրանք չէին կարող պատկանել մեր բացած առաջին դահլիճին՝ անհրաժեշտ դարձրին շարունակել մաքրման աշխատանքներն այս տեղամասում, հայտարերելու համար այն շենքի մնացորդները, որին պատկանում էին գտնված խոյակները։ 1952 թվականի աշխատանքների ընթացքում պարզվեց, որ այդ շենքը գտնվում է նախորդ տարում բացած «սրահի» հարավային կողմում և իրենից ներկայացնում է մի այլ աշխարհիկ շենք ընդարձակ սյունազարդ դահլիճով՝ հար և նման Դվինի կաթողիկոսարանի սյունազարդ դահլիճին, իսկ սրահը կազմում է այդ շենքի մասը և գտնվում է նրա հյուսիսային կողմում։

Տարակույս չի կարող լինել, որ տաճարից հարավ և հարավ-արևելք ընկած ողջ տեղամասի սիստեմատիկ մաքրումը հնարավորություն կտա ամբողջացնելու այս կոմպլեքսի հատակագիծը, նոր ու հետաքրքիր նյութեր կընձեռնի աշխարհիկ ճարտարապետության այս ուշագրավ հուշարձանի վերաբերյալ։

Պարզաբանման կարիք ունի այն հարցը, թե այսպես կոչված առաջին և սյունազարդ դահլիճները պատկանում են արդյոք միևնույն պալատական կոմպլեքսին, թե դրանք ներկայացնում են առանձին շենքերի մնացորդներ։

Ա. ԱՌԱՋԻՆ ԴԱՀԼԻՃԸ

1950—1952 թթ. ընթացքում տաճարից 45—50 մ հեռավորության վրա, դեպի հարավ-արևելք, ձորակի եզրից փոքր ինչ հետ, բացված քաղաքացիական շենքը պայմանականորեն կոչվեց առաջին դահլիճ։ Ձորակում, ոչ մեծ ժայռերի ստորոտից դեռ հիմա էլ դարնան ամիսներին բխում է մի աղբյուր, որի ջրերը, սակայն, ցամաքում են ամռան և աշնան ամիսներին։ Այս շենքի տեղադրությունը միանգամայն համապատասխանում է իշխան Գրիգոր Մամիկոնյանի պալատի այն տեղադրությանը, որ հիշատակում է Դրասխանակերտցին։ Սրա պատերի վերին մասերը նախքան մաքրվելը երևում էին հողաբլրի տակից։ Դրանց վրա է, որ ժամանակին ուշադրություն էր դարձրել նաև Թ. Թորամանյանը։

Բացված շենքը ներկայացնում է մի ընդարձակ դահլիճ ներքուստ 18,7×10,7 մ մեծությամբ ձգված արևմուտքից արևելք։ Պատերը, որոնք պահպանվել են ամբողջ պարագծով՝ 2,5—3,0 մ բարձրությամբ, շարված են տեղական դարչնա-նարնջագույն տուֆով, կրաշաղախով։ Պատերի ներսի և դրսի երեսները շարվածքով տարբերվում են միմյանցից։ Դրսի կողմից օգտագործված են մեծ չափերի սրբատաշ քարեր. արևմտյան պատի մեջ, դռան ձախ կողմում դրված է մի քար՝ 3,4×0,7 մ մեծությամբ, իսկ հյուսիսային պատի մեջ, հյուսիսային դռան աջ կողմը՝ կա մի ուրիշ քար 3,5×0,7 մ մեծությամբ։ Դահլիճի պատերը ներսի կողմից շարված են անհամեմատ ավելի փոքր չափի, կոպիտ տաշված քարերով։ Այս հանգամանքը, ինչպես և քարերի երեսին պահպանված ծեփի մնացորդները, կարծել են տալիս, որ դահլիճի պատերը ներսի կողմից ծեփված են եղել։ Ամբողջ շենքը, ինչպես և եկեղեցին դրված է երկաստիճան դետնախարիսխի վրա։

Դահլիճը՝ ներսում դրված երկու շարք մույթերի միջոցով (յուրաքանչյուր շարքում երկուական մույթ) բաժանվում է երեք նավի։ Կողքի նավերի լայնությունը կազմում է 2,00 մ, իսկ միջին նավինը՝ 5,00 մ։ Մույթերը հատակագծում խաչաձև են, 0,77 մ, լայնության թևերով։ Սրանց համապատասխան՝ հանդիպակաց պատերին կան որմնամույթեր։ Թե մույթերը և թե որմնամույթերն ունեն խարիսխներ։ Գտնվել են նաև իմպոստների բազմաթիվ բեկորներ, որոնցով պսակվում էին մույթերը կամարների տակին։ Մույթերը դասավորված են այնպես, որ արևմտյան կողմից սկսված՝ առաջին և երկրորդ թռիչքները համարյա թե հավասար են, բացառություն է կազմում միայն արևելյան կողմի թռիչքը, որը համեմատաբար ավելի փոքր է մյուսներից։ Մույթերի դասավորությունն

այնպես է, որ նրանք քառակուսիներ չեն կազմում, հետևապես դմբեթային ծածկի մասին խոսք լինել չի կարող։ մաքրման աշխատանքների ընթացքում դմբեթին պատկանող քարեր չեն էլ գտնվել։ Դահլիճի մաքրման ժամանակ գտնվել են կամարներին և թաղերին պատկանող (երկու չափի շառավիղներով) բազմաթիվ քարեր։

Դահլիճն ունի երեք դուռ։ Նրանցից մեկը, որ բավականաչափ լայն է (2,11 մ)՝ բացվում է արևմտյան կողմում, բայց նրա առանցքը չի համընկնում դահլիճի երկայնական առանցքին։ Մյուս դուռը, 1,32 մ լայնությամբ, բացված է հյուսիսային պատում։ Ինչպես այս, նույնպես և արևմտյան դռները հետագայում կիսով չափ շարված են եղել՝ թերևս պատուհանի վերածելու նպատակով։ Երրորդ դուռը գտնվում է արևելյան կողմում, միջին նավի առանցքի վրա։ Նրա ճիշտ լայնությունը հնարավոր չէ որոշել՝ այս մասում կատարված վերակառուցումների պատճառով։

Ամբողջ հատակը սալահատակված է տուֆ քարով, ըստ որում նախնական սալահատակի վրա հետագայում ծածկել են երկրորդը։ Այդ պատճառով մույթերի և որմնամույթերի խարիսխները կիսով չափ ծածկվել են նոր սալահատակով։

Դահլիճը, որի հատակագծի կոմպոզիցիան բազիլիկային է, դուցե մի պահ ենթադրել տա, որ նա եկեղեցի է եղել։ Նույնիսկ հյուսիսային պատի վրա դրսից (հյուսիս-արևմտյան անկյան մոտ) փորագրված են շրջագծի մեջ ամփոփված հավասարաթև երկու խաչ։ (Սրանց մոտ կա նաև մի փոքր արձանագրություն, որը խիստ եղծված լինելու պատճառով դեռ չի հաջողվել վերծանել)։ Սակայն բավական է մանրազնին ծանոթանալ հուշարձանին, որպեսզի փարատվեն այդ կասկածները։ Դահլիճի արևելյան կողմում, դրսի կողմից պատը պահպանվել է այնպես, որ խորանների կամ բեմի մասին որևէ խոսք լինել չի կարող։ Կնշանակե արևելյան պատը սկզբից կառուցվել է այդպես, ինչպես պահպանվել է, և ոչ մի վերակառուցման չի ենթարկվել։ Ավելի ուշ ժամանակ նրան՝ դրսի կողմից կցել են նոր պատեր և անկյուններում՝ բուրգեր։ Բացի այդ՝ պիտի նշել նաև այն, որ վաղքրիստոնեական շրջանի հայկական բոլոր եռանավ բազիլիկ եկեղեցիներում (բացառությամբ Տեկորի վերակառուցված տաճարից) մենք չունենք ոչ մի օրինակ, որ եկեղեցին ունենա երկու դույզ մույթ։ Որպես կանոն՝ եղել է երեք դույզ, իսկ Եղվարդի բազիլիկ եկեղեցում եղել է չորս դույզ։

Այսպիսով, բոլոր տվյալները խոսում են հօգուտ այն բանի, որ այս դահլիճը իրոք եղել է քաղաքացիական մի շենքի մասը և չի ծառայել կրոնական նպատակների։ Եղել են դահլիճի արևելյան կողմում այլ սենյակներ, դժվար է ասել, որովհետև այնտեղ ոչինչ չի պահպանվել։ Եթե հավատալու լինենք Թալիշ գյուղի տարիքավոր բնակիչներին՝ ապա մինչև մեր դարի սկզբները այս մասում եղել են պատերի մնացորդներ, որոնք այժմ չեն պահպանվել[1]։

Տարակույս չկա, որ այս դահլիճը պատկանում է իշխան Դրիդոր Մամիկոնյանի պալատական կոմպլեքսին և ծառայել է ընդունելության կամ ունկնդրության նպատակների համար։

Առաջին դահլիճի նախնական ձևերի վերակազմությունը առանձին դժվարություն չի ներկայացնում։ Հատակագծային կոմպոզիցիան, մույթերի դասավորությունն ու չափերը, ինչպես և ծածկին պատկանող տեղում գտնված բազմաթիվ քարերը, առանց վերապահության հաստատում են, որ դահլիճի թե միջի և թե կողքի նեֆերը ծածկված են եղել թաղերով։ Մույթերն ու որմնամույթերը միացված էին միմյանց կամարներով, որոնք դահլիճի ծածկի թաղային կոնստրուկցիայում թաղակիր կամարների դեր են կատարել։ Կտուրը երկլանջ է, լանջերը դեպի հարավ և հյուսիս։ Այսպիսով, շենքն ամբողջությամբ բազիլիկատիպ է։

Պեղումները ցույց տվին, որ ավելի ուշ ժամանակներում, երբ հավանականաբար գտնվում էր կիսավեր վիճակում՝ այն հարմարեցվել է պաշտպանական նպատակների համար։ Հարավային և արևելյան պատերը դրսի կողմից ամրացվել են լրացուցիչ պատերով, իսկ հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան անկյուններում կառուցվել են կլոր և բազմանիստ բուրգեր, տալով շենքին ամրոցի կերպարանք։ Հետագայում արված այս հավելումները, որ կատարված են նույն քարով և կրաշաղախով, շարվածքի բնույթով միանգամայն տարբերվում են հին պատերից։ Հավելված պատերի քարերն ավելի փոքր չափեր ունեն և տաշված են կոպիտ կերպով։ Բացի այդ՝ դահլիճի արևելյան դռան բացվածքը շար-

---

[1] Այդ մասին պատմեց Թալիշ գյուղի բնակիչ Դևորգ Մարտիրոսյանը (67 տարեկան)։



Նկ. 2. Արուճ. Մեծ դանլիճի հյուսիսային կողմի սրահի մնացորդները
(1951 թ. հոկտեմբեր, ֆոտո Հարությունյանի)

ված-նեղացված է։ Նրան հարմարեցված է եղել բազալտից կոփած մի դուռ, որը կրունկների վրա պտտվում էր բացվելիս։ Կրունկների համար պատրաստված բազալտե փոքրերը նույնպես գտնվել են տեղում։

Աշխարհիկ շենքն ամրոցի վերածողները հոգ են տարել նրա ոչ միայն ամրության, այլև ջրամատակարարման մասին։ Այդ նպատակի համար դեպի դահլիճն է բերվել ստորերկրյա մի առու, որի ջուրը ներս էր հոսում հյուսիսային դռան տակով և ապա հյուսիսային պատի երկարությամբ ներսից անցնելով մի առվով՝ լցվում էր դահլիճի հյուսիս-արևելյան անկյունում պատրաստված ավազանի մեջ, իսկ այնտեղից, արևելյան պատում եղած անցքի միջով՝ հոսում դեպի դուրս (հավանաբար նույնպես ստորերկրյա առվի միջոցով)։ Ավազանի պատերը մեծ խնամքով ծեփված են կրաշաղախով, իսկ ծածկը պատրաստված է կեղծ թաղի ձևով՝ հանդիպակաց երկու կողմերից թեք կերպով միմյանց հենած քարե մեծ սալերի միջոցով։

Մաքրման աշխատանքների ընթացքում դահլիճի մեջ, հարավ-արևելյան անկյունում, հատակին մոտ շերտերում հայտաբերվեցին մոխիր և երկաթի խարամ։ Այս հանգամանքը ենթադրել է տալիս, որ ավելի ուշ ժամանակներում այստեղ եղել է արհեստանոց, հավանաբար դարբնոց։

Գտնվել են նաև ջնարակած կավի ամանեղենի մնացորդներ, ապակյա ապարանջանի և ապակու բեկորներ։

Մույթերից մի բանիսի անկյուններում, քարի մեջ արված են անցքեր, թերևս անասուններ կապելու համար։

Հյուսիս-արևելյան բուրգից ոչ հեռու բացվել է կոթողի կամ խաչքարի պատվանդանի քառակուսի, եռաստիճան մի ստիլոբատ, իսկ նրանից մի քանի մետր հեռավորության վրա բացվել են միանեփ, փոքր բազիլիկ եկեղեցու մնացորդներ։ Ենթադրվում է, որ այս երկու հուշարձաններն էլ ժամանակակից են առաջին դահլիճին։

Բ. ԱՇԽԱՐՀԻԿ ՇԵՆՔ ՍՅՈՒՆԱՋԱՐԴ ԴԱՀԼԻՃՈՎ

Ինչպես արդեն նշվեց, 1951 թ. պեղումների ժամանակ Արուճի տաճարի հարավային կողմում, տաճարից 13 մետր հեռավորության վրա, դետնի երեսից մոտավորապես 1,0—1,2մ խորությամբ բացվեց 1,05 մ լայնություն և 25,0 մ երկարություն ունեցող տուֆով սալահատակված մի հարթություն՝ վրան խարիսխներ և խարիսխների բեկորներ։

Խարիսխների ներքնասալերը (67×67—70×70 սմ չափերի) գտնվում են միմյանցից 1,93—1,95 մ հեռավորության վրա, այսինքն նրանց կենտրոնների հեռավորությունը կազմում էր 2,60—2,65 մ։ Մեծ շենքի սյունասրահի այս մնացորդները ձգվում են արևմուտքից արևելք՝ գուգահեռ տաճարին։ Սրահն իր ճակատով ուղղված է դեպի տաճարը, ուրեմն՝ դեպի հյուսիս։ Պետք է ենթադրել, որ այս կողմնորոշումն ամբողջովին թելադրվել է եկեղեցու տեղադրությամբ։

Սրահի ճակատն արևելյան կողմից սկսվում է 2,5 մ երկարությամբ հոծ պատով, որից հետո, նույն պատի առանցքով, սալահատակի վրա դեպի արևմուտք դասավորված են խարիսխները՝ թվով հինգ հատ։ 1952 թ. աշխատանքների ժամանակ պարզվեց, որ խարիսխների թիվը եղել է ոչ թե հինգ, այլ ինը։ Մնացած չորս խարիսխների քառակուսի ներքնասալերի հետքերը անձրևից հետո պարզորոշ կերպով երևացին սալահատակի վրա։

Պիտի ենթադրել, որ սյունները (որոնց բնի քարերն ու խոյակները դեռ չեն գտնված) միացված են եղել կամարներով, այսինքն սրահի հյուսիսային ճակատը ներկայացրել են մի կամարաշար։

Խարիսխների ընդհանուր բարձրությունը կազմում է 43 սմ, որից 10 սմ ներքնասալի բարձրությունը, իսկ 27 սմ գլանինը։ Գլանի վերին հարթության տրամագիծը 56 սմ է, նրա վրա գծված է շրջագիծ 53 սմ տրամագծով, որը, ամենայն հավանականությամբ, համապատասխանում էր սյան բնի տրամագծին։

Սրահի կամարաշարի նեղ սալահատակը արևմտյան կողմում բեկվում է դեպի հարավ և ընդհատվում։ Ըստ երևույթին կամարաշարն անցնում էր նաև սրահի արևմտյան կողմում, սակայն ներկա մնացորդներից դժվար է այդ որոշակի կերպով պնդել։ Սրահի արևելյան կողմը ներկայացնում էր 72 սմ հաստությամբ հոծ պատ, որի ստորին մասը 60—70 սմ բարձրությամբ պահպանվել է։ Պատը շարված է սրբատաշ տուֆով, կրաշաղա-

խով։ Նա շարունակվում է դեպի հարավ և ընդհատվում մոտավորապես նոր գտնված մեծ խոյակի մոտ։

Խարիսխներից 4,75 մ հեռավորության վրա և նրանց ուղղությանը զուգահեռ անցնում է մի երկայնական պատ։ Պիտի ենթադրել, որ դա սրահի հետին պատն է։ Սրահին անմիջապես կից, նրա հարավային կողմից բացվել է սենյակների շարք 5,15 մ թռիչքով։ Սրանց քանակը դեռևս պարզ չէ, քանի որ այս մասը դեռևս լրիվ կերպով մաքրված չէ հողից։

Մեր ենթադրությունն այս մասում՝ սյունազարդ մեծ դահլիճի գոյության մասին միանգամայն ճշտվեց։ 1932 թ. պեղումների ժամանակ երկու մեծ խոյակների կողքին, հարավային կողմից, բացվեց մեկական խարիսխ, որոնց տրամագծերը համապատասխանում են խոյակների ներքևի շրջագծի տրամագծին։ Այս շարքի երրորդ խարիսխը բացվեց արևմտյան կողմում։ Այսպիսով հաջողվեց բացել սյունազարդ դահլիճի հյուսիսային շարքի երեք խարիսխները, որոնք գտնվում են միմյանցից 7,33 մ հեռավորության վրա (կենտրոնից-կենտրոն)։

Նկատի ունենալով բացված խոյակների ու խարիսխների ձևերի, ինչպես և նրանց չափերի ու հեռավորության, չնչին բացառություններով, նմանությունը Դվինի կաթողիկոսարանի սյունազարդ դահլիճի խոյակների և խարիսխների ձևերին, չափերին ու հեռավորությանը, հարավային սյունաշարքի խարիսխները գտնելու համար անհրաժեշտ համարեցինք դեկավարվել Դվինի կաթողիկոսարանի հատակագծի տվյալներով։ Այդ նպատակի համար սյունազարդ դահլիճի հյուսիսային սյունաշարքի յուրաքանչյուր խարիսխի կենտրոնից չափելով դեպի հարավ 7,33 մ, հայտաբերեցինք մեկական նույնատիպ խարիսխներ։ Այսպիսով, հաջողվեց բացել այդ դահլիճի նաև հարավային սյունաշարքի խարիսխները՝ յուրաքանչյուր շարքում երեք հատ։

Քանի որ նմանությունը Դվինի կաթողիկոսարանի սյունազարդ դահլիճին միանգամայն ակնհայտ էր՝ ընակունարար Դվինի կաթողիկոսարանի օրինակով այստեղ ևս ջանացինք հայտաբերել չորսական խարիսխ՝ յուրաքանչյուր շարքում։ Դահլիճի արևմտյան կողմում խարիսխների չորրորդ դույլի որոնումն անիմաստ էր, քանի որ այստեղ արդեն բացվեցին դահլիճի արևմտյան լայնական պատի մնացորդները։ Որոնումները կատարվեցին յուրաքանչյուր շարքի արևելյան ծայրերում, այն տեղերում, որտեղ համաձայն չափման, պիտի լինեին դրանք։ 1932 թվականի աշխատանքների ընթացքում չհաջողվեց հայտաբերել խարիսխների չորրորդ դույլը։ Կարելի է ենթադրել, որ Արուճի սյունազարդ դահլիճն ունեցել է երեք դույլ սյուն։ Սակայն կա մի հանգամանք, որ չպետք է անտեսել։ Եկեղեցու հարավ-արևելյան անկյունից ոչ հեռու ընկած է մի առանձին խարիսխ, որի չափերը (բացառությամբ բարձրության) և ձևը համընկնում են սյունազարդ դահլիճում բացված խարիսխների չափերին ու ձևին։

Ուշադիր գննումը ցույց է տալիս, որ այս խարիսխն ընկած է 25 մ հեռավորության վրա այն տեղից, որտեղ նա պիտի գտնվեր (նկատի ունենք հյուսիսային շարքի արևելյան ծայրը)։ Պետք է ենթադրել, որ հետագայում, երբ դահլիճն ավերված էր, այդ խարիսխը որևէ նպատակով ուղիղ գծով փոխադրել են դեպի հյուսիս, տաճարի մոտ։ Եթե այդ ենթադրությունը ճիշտ չէ, եթե սյունազարդ դահլիճում եղել են միայն երեք դույլ սյուներ, ապա մնում է կարծել, որ այդ խարիսխը պատկանում էր Արուճի պալատական կոմպլեքսի մի ուրիշ սյունազարդ դահլիճի, որը դեռևս չի բացված։ Ապագա պեղումները միայն կարող են այս հարցը վերջնականապես լուսաբանել։

Այնուհետև, շարունակելով պեղումները սյունազարդ դահլիճի հարավային կողմում, 1932 թ. աշխատանքների վերջում հաջողվեց այս մասում բացել դահլիճի ամբողջ երկարությամբ ձգվող 3,9 մ թռիչք ունեցող սենյակների պատերի հիմքերը։ Սենյակների քանակն այստեղ նույնպես հնարավոր չեղավ պարզել, որովհետև նրանց միջի հողը դեռ չի հանվել։ Դրանցից մեկի մեջ բացվում է մի դուռ սյունազարդ դահլիճից։ դռան լայնությունը մի մետր է (Դվինի կաթողիկոսարանում նույն չափն է), հարավային սենյակների և սյունազարդ դահլիճի միջև եղած պատի հաստությունը նույնպես մեկ մետր է։

Այսպիսով, սրահին անմիջապես կից, նրա հարավային կողմում բացված աշխարհիկ շենքի հատակագիծը, ինչպես և հայտաբերված ճարտարապետական մանրամասները թե ընդհանուր կոմպոզիցիայով, թե չափերով և թե ձևերով սերտորեն առնչվում են Դվինի կաթողիկոսարանի հետ։ Այդ բանը առանձնապես համոզիչ կերպով երևում է ստորև բերված համեմատական աղյուսակից։

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Դվինի կաթողիկոսարանի և Արուճի պալատի սյունազարդ դահլիճների չափերի (մետրերով)

	Դահլիճի երկարությունը	Դահլիճի լայնությունը	Սյուների հեռավորությունը միմյանցից երկայնական ուղղությամբ (կենտրոնից-կենտրոն)	Սյուների հեռավորությունը միմյանցից լայնական ուղղությամբ (կենտրոնից-կենտրոն)	Խարիսխների հեռավորությունը երկայնական պատերից	Խարիսխների հեռավորությունը լայնական պատերից	Խարիսխների ներքին սալի չափերը	Խարիսխների բարձրությունը	Սյուների տրամագիծը (ըստ խարիսխների)	Խոյակների երկարությունը	Խոյակների լայնությունը	Խոյակների հաստությունը	Խոյակների տրամագիծը	Խոյակների կենտրոնների հեռավորությունը
Դվին	26,7	11,4	7,30	7,25	2,10	2,00	0,995×0,995	0,978	0,78—0,80 վերևում՝ 0,77—0,78	2,05	0,90	0,70	0,70	1,155
Արուճ	?	11,35	7,55	7,55	1,90	2,55	101×101 102×102	0,74	ներքևում՝ 0,81—82	2,20	0,98	0,75	0,72	1,22

Ինչպես տեսնում ենք, նմանությունը միանգամայն ակնհայտ է, Դվինի կաթողիկոսարանի սյունազարդ դահլիճի որոշ չափսեր համարյա նույնությամբ կրկնվում են Արուճի պալատի սյունազարդ դահլիճում, ուրիշ չափսեր կիրառված են չնչին տարբերությամբ։ Տարակույս չկա, որ Դվինի կաթողիկոսարանի կառուցումից մոտ երկու հարյուր տարի անց, 7-րդ դարի երկրորդ կեսում, Արուճում համարյա նույնությամբ կրկնել են նրա կոմպոզիցիան, տեղադրելով, սակայն, այդ աշխարհիկ շենքը ոչ թե եկեղեցու հյուսիսային կողմում, ինչպես դա տեղի ունի Դվինում, այլ հարավային կողմում, հատկապես հարմարեցնելով շենքի կոմպոզիցիան (նկատի ունենք սրահը) եկեղեցուն։

Այս ավելի քան ուշագրավ երևույթը մտածել է տալիս, որ ֆեոդալական Հայաստանում տիպային լուծումներ գոյություն ունեին ոչ միայն եկեղեցական, այլև աշխարհիկ շենքերի համար։ Եթե մինչև Արուճի պեղումները Դվինի կաթողիկոսարանն իր ուրույն կոմպոզիցիայով և մանրամասներով համարվում էր մի եզակի երևույթ ֆեոդալական Հայաստանի աշխարհիկ ճարտարապետության մեջ, ապա ներկայումս կարելի է պնդել, որ որոշակի տիպի աշխարհիկ շենքերն այդ ժամանակ տարածված են եղել։

Այժմ մի քանի խոսք սյունազարդ դահլիճի ճարտարապետական բեկորների՝ խոյակների ու խարիսխների մասին։ Սրանք իրենց հետաքրքիր ձևերով անշուշտ արժանի են առանձին ուշադրության։

Խարիսխները—ինչպես արդեն նշվեց, 1952 թ. պեղումների ժամանակ սյունազարդ դահլիճում հայտարերվեց վեց խարիսխ, 3-ական հատ յուրաքանչյուր շարքում, միմյանցից հավասար հեռավորությամբ (7,55 մ)։ Մի ուրիշ առանձին խարիսխ գտնվեց եկեղեցու հարավ-արևելյան անկյան մոտ։

Խարիսխները բաղկացած են երկու հիմնական մասից՝ քառակուսի ներքնասալից և նրա վրա դրված կլոր գլանից։ Այդ երկու մասերը կերտված են մի ամբողջական քարից։ Ներքնասալի կողմերի չափսերը տատանվում են 101×101 սմ—102×102 սմ սահմաններում, իսկ նրանց բարձրությունը կազմում է 38—40 սմ, գլանները 35,5—36 սմ բարձրություն ունեն։ Նրանց հարթ երեսների տրամագիծը կազմում է 87 սմ, որոնց վրա կարկինով գծված են շրջագծեր 81—82 սմ տրամագծով։ Պիտի ենթադրել, որ դրանք համապատասխանում են սյան բների ներքևի տրամագծերին։ Ուշագրավն այն է, որ խոյակների տակի շրջանաձև հարթությունները, որոնք անմիջապես նստում էին սյան բնի վրա, ունեն ընդամենը 77 սմ տրամագիծ։ այդ նշանակում է, որ սյան բնի վերևի տրամագիծը նվազում է 4—5 սմ չափով, այսինքն սյան բունն ունեցել է բարակացում։ Այս դիտողությունը մենք անում ենք միայն վերոհիշյալ տվյալների հիման վրա, քանի որ մինչև այժմ, ինչպես Դվինում, այնպես էլ Արուճում, չեն հայտարերվել սյունների բների բեկորներ։

Առանձին ընկած խարիսխն իր ձևերով հար և նման է մնացած վեցին, սակայն չափսերի մեջ կան տարբերություններ։ Նրա քառակուսի ներքնասալի չափսերը (101×101 սմ) ամբողջովին համընկնում են մյուս խարիսխների չափսերին, սակայն բարձրությունը կազմում է ոչ թե 38 սմ., ինչպես մյուս խարիսխներում, այլ 43 սմ։ Գլանի բարձրությունը կազմում է 40 սմ. այսինքն՝ 4 սմ-ով ավելի բարձր է, քան մյուս խարիսխների գլանները։ Այսպիսով, խարիսխի ընդհանուր բարձրությունը կազմում է 83 սմ, մյուս խարիսխների 74 սմ բարձրության դիմաց, այսինքն՝ 11 սմ-ով ավելի բարձր է, քան մնացած վեց խարիսխները։ Բացի այդ, ուշադրավ է նաև այն, որ այս խարիսխի գլանի վերին շրջանակի հարթության տրամագիծը 80 սմ է, այսինքն՝ 7 սմ-ով պակաս, քան մյուս խարիսխներինը։ Դրա հետ միասին, այդ հարթության կենտրոնում արված է 25 սմ խորությամբ և 22×22 սմ մակերեսով մի փորվածք, մի բան՝ որ չունեն մնացած վեց խարիսխները։ Նկարագրած առանձնահատկությունները որոշ չափով դժվար են դարձնում այս խարիսխը վստահ կերպով նույն սյունազարդ դահլիճին վերագրել։

Խոյակները—սյունազարդ դահլիճին պատկանող առայժմ երկու խոյակ է գտնված։ Դրանցից առաջինը հայտնի էր դեռևս նախքան պեղումները, այն ընկած էր գետնի վրա, եկեղեցուց դեպի հարավ, 20—25 սմ հեռավորությամբ[1]։ Ծանոթ է եղել արդյոք Թորամանյանը այդ խոյակին, թե ոչ՝ դժվար է ասել, քանի որ ինքը դրա մասին ոչ մի հիշատակություն չունի։ Ինչպես արդեն նշվեց, երկրորդ խոյակը գտնվեց 1951 թ. պեղում-

[1] Հրատարակված է՝ Թ. Թորամանյան, «Նյութերի» 1-ին հատորում և մեր Դվինի 5—7-րդ դարերի ճարտարապետական հուշարձանները աշխատությունում։

Նկ. 3. Արուճ. Սյունաձարդ դահլիճի խարիսխների հարավային շարքը։

ների ժամանակ, առաջին խոյակից 6—7 մետր դեպի արևելք։ Նրանց ընդհանուր ծավալային ձևերը նման են, սակայն հարդարման մոտիվներով և չափերով տարբերվում են միմյանցից

Առաջին խոյակի չափերն ավելի փոքր են, քան նոր բացված խոյակինը։ Նրա երկարությունը կազմում է 1,86 մ, բարձրությունը՝ 0,98 մ և հաստությունը՝ 0,75 մ. Այսպիսով, խոյակի ընդհանուր ծավալը կազմում է մոտ 1,3 խոր. մետր, կերված է մի ամբողջական քարից։

Դվինի կաթողիկոսարանի սյունադարդ դահլիճի խոյակին նմանվող այս խոյակն ունի 1,86—0,75 մ չափի ուղղանկյուն վերնասալ (աբակ)։ Սրա տակին գտնվում են երկու խոյողներ, որոնց մեջտեղում բարձրանում և վերնասալին է հասնում սյան բունը։ Խոյողների տրամագիծը 60 սմ է, իսկ կենտրոնների միջև եղած հեռավորությունը՝ 1,06 մ։

Խոյակը մշակված է նույն սկզբունքով, ինչ Դվինի կաթողիկոսարանի խոյակը, այսինքն՝ քանդակագարդված է նրա միայն ճակատային՝ դեպի դահլիճի միջին մասն ուղղված երեսը. կողքի երեսները մշակված են միայն ծավալներով և զուրկ են որևէ քանդակից, իսկ հետևի երեսը միանգամայն հարթ է։ Խոյակի վերնասալի ճակատային երեսը (1,87×0,18 մ չափի) մշակված է օրնամենտալ մի մոտիվով, որը կարելի է տեսնել թե Արուճի տաճարի, և թե 7-րդ դարի այլ հուշարձանների պատուհանների պսակներում։ Քարի վրա ռելյեֆ կերպով փորագրված այդ օրնամենտը պատկերում է թեք անկյան տակ միմյանց հենած նշաձև թերթիկներ, որոնց միջև առաջացած եռանկյունաձև հարթությունները պատած են նույն ձևի փորվածքով։ Այդ նույն մոտիվը՝ կոմպոզիցիոն այլ դասավորությամբ, կրկնվում է ձախակողմյան խոյողի վրա, որտեղ քանդակված է շրջագծի մեջ ամփոփված վեցթևանի մի վարդյակ։ Վարդյակի թերթերի ծայրերը միացված են միմյանց նույնպիսի նշաձև փորվածքով և նրանց միջև առաջացած հարթությունները մշակված են եռանկյունաձև ռելյեֆով։

Աջակողմյան խոյողը բավականաչափ ֆնասված է, սակայն դժվար չէ նկատել, որ նրա հարդարանքը չի կրկնում ձախակողմյան խոյողի հարդարանքի օրնամենտալ մոտիվները։ Այս խոյողի հարթության վրա ռելյեֆ կերպով գծագրված է երկու շրջագիծ։ Կարելի է ենթադրել, որ խոյողի մնացած հարթությունն ուզեցել են պատել արմավենու ոլորված ճյուղի մոտիվով, սակայն ինչ-որ պատճառով թերավարտ են թողել քանդակը։ Խոյողների միջև ընկած ուռուցիկ մակերևույթը, որը սյան գլանաձև բնի շարունակությունն է կազմում, ի տարբերություն Դվինի կաթողիկոսարանի և Արուճի երկրորդ խոյակների՝ բոլորովին զուրկ է հարդարանքից։

Սյունադարդ դահլիճի երկրորդ խոյակն իր չափերով, ձևերով ու հարդարանքով շատ ավելի հիշեցնում է Դվինի կաթողիկոսարանի խոյակը։ Սրա երկարությունը 2.20 մ է, բարձրությունը՝ 0,98 մ, իսկ հաստությունը՝ 0,75 մ։ Խոյողների տրամագիծը հավասար է 0,72 մ-ի, նրանց կենտրոնների մեջ եղած հեռավորությունը՝ 1,22 մ, իսկ սյան բնի տրամագիծը խոյակի տակին կազմում է 0,77 մ։ Այսպիսով՝ այս նոր խոյակը անհամեմատ ավելի մեծ է իր չափերով, քան Դվինի կաթողիկոսարանի խոյակը։

Խոյակի վերնասալի ճակատը 16 սմ բարձրություն և 2.20 մ երկարություն ունի և զարդարված է 7-րդ դարի համար շատ բնորոշ օրնամենտալ մի մոտիվով՝ խաղողի տերևի և ողկույզի միահյուսվածքի մոտիվով։ Քանդակը խիստ ավերված է։ Նկատելի է, որ շրջագծերի մեջ ամփոփված տերևների և ողկույզների թիվը 17 է։

Օրնամենտալ այս մոտիվը, որ հայկական արվեստում հանդիպում ենք նաև ավելի վաղ շրջանի հուշարձաններում, այստեղ իր նկարով և քանդակի բնույթով անհամեմատ ավելի մոտ է Զվարթնոցի համապատասխան օրնամենտին։

Խոյողների վրա, ինչպես Դվինի խոյակում, քանդակված են արմավենու ոլորված ճյուղեր։ Խոյողների միջև եղած մակերևույթը նույնպես հարդարված է արմավենու երկու ուղղաձիգ ճյուղերով, որոնց վերին ծայրերը համապատասխանորեն թեքված են դեպի աջ և ձախ՝ խոյողների կողմը։ Դվինի խոյակից տարբերությունն այն է, որ այստեղ երկու ճյուղերի միջև թողնված է որոշ հեռավորություն և այդ մասում, այսինքն՝ խոյակի կոմպոզիցիոն կենտրոնում, քանդակված է եռաստիճան պատվանդանի վրա կանգնեցրած մի խաչ։ Խաչի աջ և ձախ թևերը հասնում են մինչև արմավենու ճյուղերի ծողերին՝ իրենցով ծածկելով ճյուղերի մի մասը, իսկ վերին թևը երկու կողմից պսակվում է եռատերև օրնամենտալ մոտիվով։

Համապատասխան հարդարանքի են ենթարկված նաև վերնասալի անմիջապես ներ-

քեռում, խոյողների երկու կողմերում գտնվող անկյունները։ Դրսի կողմից այդ անկյուններում քանդակված են անկյունավոր ռելյեֆով զարդարված բարձիկներ, որոնց վրա հենվում են վերնասալի կառուցված մասերը, իսկ ներսի կողմից՝ դրանք զարդարված են բավական դեղեցիկ օրնամենտով, որի կոմպոզիցիան, տեղին համապատասխան՝ լավ է նկարված։

Այսպիսով, Արուճի այս երկրորդ խոյակը իր ծավալային ձևերով հարդարման մոտիվներով ու հիմնական չափումներով թեև ամբողջովին վերարտադրում է Դվինի կաթողիկոսարանի խոյակը, սակայն չի հանդիսանում նրա պատճենը, նրա պասիվ կրկնողությունը։

Արուճի պալատի ճարտարապետը մոտ երկու հարյուր տարի հետո, հավանաբար պատվեր ստանալով կրկնել Դվինի կաթողիկոսարանի շենքը, հարկ է համարել նրա առանձին մանրամասներում մտցնել որոշ փոփոխություններ, կիրառելով օրնամենտալ այն մոտիվները, որ ավելի համապատասխանում էին իր ժամանակաշրջանի դեղարվեստական հասկացողություններին։

Այս, ինչպես և նման մի շարք օրինակներ (ասենք՝ Զվարթնոցի ձևերի վերարտադրությունը Գագիկ Բագրատունու կառուցած եկեղեցում, Անիում ցույց ենք տալիս, որ միջնադարի հայ ճարտարապետները նման դեպքերում ցուցաբերել են ստեղծագործական ինքնուրույնություն և նույնությամբ, երբեք չեն կրկնել հին ձևերը։

Երկրորդ խոյակն ընդհանրապես մշակված է արտահայտիչ և հետաքրքիր ձևերով, հյութեղ և լավ նկարված քանդակներով, որոնք օրգանապես բխում են խոյակի տարածական ձևերից, նպաստում նրանց հարստացմանը։

Արուճի սյունադարդ դահլիճի հիշատակված երկու խոյակներն էլ, ինչպես Դվինի կաթողիկոսարանի խոյակը, վերնասալի վրա ունեն երկայնական փոսեր՝ փայտի գերանների համար։

Վերջացնելով խոյակների նկարագրությունը՝ անհրաժեշտ է ընդհանրապես մի քանի խոսք ասել այդ տիպի խոյակների տարածման մասին Հայաստանում։ Մեր նախորդ աշխատություններում հետազոտելով Դվինի կաթողիկոսարանի խոյակի ձևերը, աշխատել էինք ցույց տալ, որ այդ խոյակը ծագում է ժողովրդական բնակարաններում հանդիպող փայտի խոյակներից, որ սրանց քարե ձևերում մոնումենտալացված են փայտի խոյակները։ Արուճի խոյակների հետազոտությամբ ավելի ևս հիմնավոր է թվում այդ տեսակետը։

Եթե մինչև Հայրենական պատերազմը գոյություն ուներ այն կարծիքը, որ Դվինի կաթողիկոսարանի խոյակները իրենց ձևով եզակի երևույթ են հայ ճարտարապետության մեջ, ապա վերջին տարիների հետազոտությունների արդյունքները անհրաժեշտ դարձրին վերանայել այդ կարծիքը։ Հաջողվել է հայտաբերել Դվինի խոյակի տիպի խոյակներ Հռիփսիմեի տաճարի հյուսիս-արևելյան խորանում, իսկ արմավենու ոլորահյուս տերևի մոտիվ՝ Երերույքի տաճարի հարավային որմնամույթերի խոյակի վրա, Զվարթնոցում և վերջապես Արուճի տաճարում՝ արևելյան պատի խորշերը պսակող կամարների կրնկում։

Դվինի—Արուճի խոյակների տիպը 5—7-րդ դարերում եղել է տարածված Հայաստանում։ Նորահայտ նյութերը այդ կարծիքը առավել ևս անվիճելի են դարձնում, մանավանդ որ նշված տիպի խոյակները կիրառվել են գերազանցապես աշխարհիկ շենքերում։ Որ աշխարհիկ շենքերն ունեցել են իրենց որոշակի ճարտարապետական ձևերն, երևում է նաև այն փաստից, որ բացառությամբ Հռիփսիմեի տաճարի, այս տիպի խոյակների կիրառությանը հանդիպում ենք մասնավորապես 5—7-րդ դարերի երեք աշխարհիկ շենքերում՝ Դվինի և Զվարթնոցի կաթողիկոսարաններում և Արուճի պալատում։

Ժողովրդական ճարտարապետության տրադիցիաների վերարտադրությունը վաղ միջնադարի մոնումենտալ աշխարհիկ ճարտարապետության մեջ արտահայտվել է ոչ միայն առանձին մանրամասներում, այլև ծածկի կոնստրուկտիվ ձևերի մեջ։

Դվինի կաթողիկոսարանի ճարտարապետության ուսումնասիրությանը նվիրված մեր նախորդ աշխատություններում, ելնելով նրա հատակագծային կոմպոզիցիայի վերլուծությունից և մի շարք այլ փաստերից, ենթադրել էինք, որ սյուների դասավորությամբ առաջացած յուրաքանչյուր քառակուսին սյունադարդ դահլիճում ծածկված էր փայտյա սողոմաքաշ կամ հաղարաշեն կոչվող կոնստրուկտիվ սիստեմով։ Արուճի սյունադարդ դահլիճի նորահայտ նյութերը հիմք են տալիս ոչ թե վերանայելու այդ կարծիքը, այլ, ընդհակառակը, ավելի համոզվելու նրա ճշտության մեջ։ Սյուների այդպիսի դասավորությունը, որի շնորհիվ դահլիճի կենտրոնում կազմվում էին քառակուսիներ, Դվինի կաթողի-

Նկ. 4. Արուճ. Մեծ դահլիճի խոյակներից մեկը (շրջելուց հետո)։
(1952 թ. հոկտ.։ Ֆոտո Վ. Հարությունյանի)

Նկ. 5. Արուճ. Սյունազարդ դահլիճի մեծ խոյակը։
(Ֆոտո Վ. Հարությունյանի)

կոթարանի սյունազարդ գահլիճում ոչ թե պատահական է, ինչպես կարծում էին ոմանք, այլ հատկապես կապվում է ծածկի սիստեմի հետ։

Նկ. 6. Արուճ. Մեծ դահլիճի խոյակը

Արուճում պեղված աշխարհիկ շենքերի մնացորդների նախնական ուսումնասիրությունը թույլ է տալիս անելու հետևյալ եզրակացությունները։

1. Նկեղեցու հարավային և հարավ-արևելյան կողմում հայտաբերված աշխարհիկ շենքերի մնացորդները հանդիսանում են պատմական աղբյուրներում հիշատակված իշխան Գրիգոր Մամիկոնյանի պալատական շենքերի մնացորդները։

2. Պետք է ապացուցված համարել ինչպես եկեղեցու, այնպես էլ պալատի կառուցման ժամանակի (7-րդ դարի երկրորդ կես) վերաբերյալ պատմական վկայությունների ստույգ լինելը։

3. Արուճի սյունազարդ դահլիճով աշխարհիկ շենքը չնչին տարբերությամբ վերարտադրում է Դվինի կաթողիկոսարանի հատակագծային կոմպոզիցիան, ճարտարապետական ու կոնստրուկտիվ ձևերն ու չափերը։

4. Այս հանգամանքը վկայում է, որ Հայաստանում 5—7-րդ դարերում մշակվել են ոչ միայն եկեղեցական, այլև աշխարհիկ շենքերի որոշակի տիպեր։

5. Հայաստանի ֆեոդալական ճարտարապետության կազմավորման պրոցեսում մոնումենտալ աշխարհիկ շենքերը հանդես են եկել եկեղեցականից տարբեր կոմպոզիցիոն ու ճարտարապետական ձևերով, որպես հայկական ճարտարապետության միանգամայն ինքնուրույն մի ընագավառ։

6. Չնայած այն հանգամանքին, որ սոցիալական անհավասարության հողի վրա տեղի ուներ խորը հակասություն ֆեոդալական Հայաստանի մի կողմից հոգևոր ու աշխարհիկ ֆեոդալներին պատկանող մոնումենտալ բնակարանների և մյուս կողմից ժողովրդական բնակարանների ճարտարապետության միջև, վերջինիս լավագույն տրադիցիաներն իրենց որոշակի ազդեցությունն են ունեցել տիրապետող դասակարգին պատկանող բնակարանային շենքերի ճարտարապետության վրա։